

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**

**ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հոդված 1. «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության 2005 թվականի հուլիսի 8-ի ՀՕ-166-Ն օրենքի (այսուհետ՝ օրենք)՝

1) 9-րդ հոդվածի «ժգ» կետից հանել «և տրանսպորտային միջոցների հաշվառման համարանիշների հատկացման աճուրդների անցկացման կարգը» բառերը.

2) 10-րդ հոդվածի 1-ին մասի «թ» կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«թ) սահմանում է տրանսպորտային միջոցների հաշվառման մեծ պահանջարկ ունեցող համարանիշերի հատկացման գներն ըստ չափորոշիչների.».

3) 13-րդ հոդվածի՝

ա. 3-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3. Հայաստանի Հանրապետությունում տրանսպորտային միջոցի հետ կատարվող գործարքներից ծագող տրանսպորտային միջոցի սեփականության, գրավի եւ լիզինգի պայմանագրով վարձակալության իրավունքը ծագում է (պետությունը ճանաչում է) պետական գրանցման պահից: Եթե գրավի առարկա տրանսպորտային միջոցը, օրենքին կամ պայմանագրին համապատասխան, պետք է գտնվի գրավառուի մոտ, ապա գրավի իրավունքը ծագում է գրավի առարկա տրանսպորտային միջոցը նրան հանձնելու պահից, իսկ եթե այն հանձնվել է մինչև պայմանագիրը կնքելը, ապա այն կնքելու պահից: Անուսինների՝ տրանսպորտային միջոցի նկատմամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված իրավունքները եւ սահմանափակումներն ունեն իրավաբանական ուժ, եթե նույնիսկ այդ իրավունքներն առանձին չեն գրանցվել:».

բ. 15-րդ, 16-րդ և 17-րդ մասերում «հուլիսի 1» բառերը փոխարինել «հոկտեմբերի 16» բառերով:

4) 13.2-րդ հոդվածի՝

ա. 2-րդ մասում «մեկնարկային» բառերը փոխարինել «սահմանված» բառերով,

բ. 3-րդ և 5-րդ մասերը ճանաչել ուժը կորցրած.

5) 28-րդ հոդվածի 1.2-րդ մասում ««A» և «B»» բառերը փոխարինել ««A», «B» և «C»» բառերով, իսկ ««A1» և «B1»» բառերը ««A1», «B1» և «C1»» բառերով.

6) 33.1-րդ հոդվածի 2-րդ մասի «բ» կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«բ) տրանսպորտային միջոցների հաշվառման մեծ պահանջարկ ունեցող, ինչպես նաև ցանկալի համարանիշներ տրամադրելու շնորհիվ ստացվող միջոցներից.»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո տրանսպորտային միջոցների հաշվառման (վերահաշվառման, հաշվառումից հանման) դեպքում մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը տրանսպորտային միջոցներին հատկացված հաշվառման համարանիշների հետ կապված գործողությունները կատարվում են սույն օրենքով սահմանված կարգով:

Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը տրված տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքի վկայականները (վարորդական վկայականները) գործում են մինչև դրանց գործողության ժամկետի ավարտը, իսկ գործողության ժամկետի նշում չպարունակող վկայականները՝ մինչև **2012 թվականի հունիսի 30-ը:**

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Սույն օրենքն ուժի մեջ մտնելու պահից ուժը կորցրած ճանաչել «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության 2010 թվականի նոյեմբերի 15-ի ՀՕ-171-Ն օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ պարբերությունը:

ԱՄ Փ Ո Փ Ա Թ Ե Ր Թ

«Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծում
 ՀՀ Ազգային ժողովի պատգամավորների առաջարկությունների հիման վրա և ՀՀ կառավարության նախաձեռնությամբ կատարված փոփոխությունների վերաբերյալ

Հ/Հ	Առաջարկության հեղինակը	Հոդվածը, մասը	Առաջարկությունը	Եզրակացությունը
1.	ՀՀ կառավարություն	օրինագծի վերնագիր	Նախագծի վերնագրից հանել «ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ» բառերը, քանի որ նախագծով գործող օրենքում կատարվում են միայն փոփոխություններ	Վերնագրից հանվել են «ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ» բառերը :
2.	Ազգային ժողովի պատգամավորներ Արա Նռանյան Արայիկ Հովհաննիսյան	հոդված 2, մաս 2	Գործողության ժամկետի նշում չպարունակող վարորդական վկայականների գործողության ժամկետը երկարացնել և 3 ամսով՝ մինչև 2012 թվականի հունիսի 30-ը:	«2012 թվականի մարտի 31-ը» բառերը փոխարինվել են «2012 թվականի հունիսի 30-ը» բառերով :